

**ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԿՈՆՎԵՆՑԻԱ ՓՈՓՈԽՎԱԾ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ***

ՆԱԽԱԲԱՆ

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) անդամ երկրները՝ սույն Կոնվենցիան ստորագրող Կողմերը,

հաշվի առնելով, որ անձանց, կապիտալի, ապրանքների և ծառայությունների միջազգային տեղաշարժի զարգացման հետ միասին (թեև ինքնին մեծապես շահավետ է) ավելացել են հարկերից խուսափելու և չվճարելու հնարավորությունները, և, ուստի, պահանջվում է հարկային մարմինների միջև համագործակցության ուժեղացում,

ողջունելով վերջին տարիներին հարկերից խուսափելու և հարկերը չվճարելու դեմ պայքարի միջազգային մակարդակով, երկկողմ կամ բազմակողմ ուղղություններով իրականացված տարբեր ջանքերը,

հաշվի առնելով, որ պետությունների միջև համակարգված ջանքերն անհրաժեշտ են հարկի ցանկացած տեսակին վերաբերող հարցերով վարչական աջակցության բոլոր ձևերն ուժեղացնելու համար՝ միևնույն ժամանակ ապահովելով հարկատուների իրավունքների պատշաճ պաշտպանությունը,

ընդունելով, որ միջազգային համագործակցությունը կարող է կարևոր դերակատարում ունենալ հարկային պարտավորությունների պատշաճ ձևով գնահատումը դյուրացնելու և հարկատուին՝ իր իրավունքներն ապահովելու հարցում աջակցելու գործում,

հաշվի առնելով, որ հիմնարար սկզբունքները, որոնք հնարավոր են դարձնում յուրաքանչյուր անձի իրավունքները և պարտականությունները համապատասխան օրենսդրական ընթացակարգին համաձայն սահմանելը, պետք է ճանաչվեն բոլոր պետություններում հարկային հարցերի նկատմամբ կիրառվող, և որ պետությունները պետք է փորձեն պաշտպանել հարկատուների օրինական շահերը, ներառյալ խտրականությունից և կրկնակի հարկումից պատշաճ պաշտպանությունը,

հետևաբար, համոզված լինելով, որ պետությունները պետք է իրականացնեն միջոցառումներ կամ տրամադրեն տեղեկություններ՝ հաշվի առնելով տեղեկությունների գաղտնիությունը պահելու անհրաժեշտությունը և մասնավոր կյանքի և անձնական տվյալների արտահոսքից պաշտպանության վերաբերյալ միջազգային փաստաթղթերը,¹

* Տեքստը փոփոխվել է Կոնվենցիան փոփոխող արձանագրության (CETS No. 208) դրույթների համաձայն, որն ուժի մեջ է մտել 2011թ. հունիսի 1-ին

¹ Տեքստը փոփոխվել է Կոնվենցիան փոփոխող արձանագրության (CETS No. 208) դրույթների համաձայն,

հաշվի առնելով, որ ձևավորվել է նոր համագործակցային միջավայր, և որ ցանկալի է բազմակողմ փաստաթուղթը հասանելի դարձնել՝ ավելի մեծ թվով պետությունների թույլ տալու համար օգտվել նոր համագործակցային միջավայրից, և միևնույն ժամանակ հարկային ոլորտում կիրառել համագործակցության ամենաբարձր միջազգային չափանիշները,²

ցանկանալով կնքել հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին կոնվենցիա,

համաձայնեցին հետևյալի մասին.

ԳԼՈՒԽ I

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

Հոդված 1

Կոնվենցիայի առարկան և անձինք, որոնց վրա այն տարածվում է

1. Կողմերը, IV գլխի դրույթներին համապատասխան, միմյանց տրամադրում են հարկային հարցերով վարչական աջակցություն: Այդ աջակցությունը անհրաժեշտության դեպքում կարող է ներառել դատական մարմինների կողմից ձեռնարկված միջոցներ:

2. Այդ վարչական աջակցությունն ընդգրկում է.

ա. տեղեկությունների փոխանակումը՝ ներառյալ միաժամանակյա հարկային ստուգումները և արտասահմանում հարկային ստուգումներին մասնակցությունը,

բ. աջակցությունը բռնագանձման, այդ թվում՝ ապահովման միջոցների կիրառման հարցում, և

գ. փաստաթղթերի հանձնումը:

3. Կողմը վարչական աջակցություն է տրամադրում՝ անկախ տվյալ անձի՝ այդ Կողմի կամ որևէ այլ պետության ռեզիդենտ կամ քաղաքացի լինելու հանգամանքից:

Հոդված 2

Այն հարկերը, որոնց վրա տարածվում է սույն Կոնվենցիան

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է՝

ա. Կողմի սահմանաձև հետևյալ հարկերի նկատմամբ.

i. եկամտահարկ կամ շահութահարկ,

² Տեքստը լրացվել է Կոնվենցիան փոփոխող արձանագրության (CETS No. 208) դրույթների համաձայն,

ii. կապիտալի հավելաճից գանձվող հարկեր, որոնք առանձին գանձվում են եկամտային հարկից կամ շահութահարկից,

iii. զուտ ակտիվներից գանձվող հարկեր,

և

բ. հետևյալ հարկերի նկատմամբ.

i. եկամտահարկ, շահութահարկ, կապիտալի հավելաճից կամ զուտ ակտիվներից գանձվող հարկեր, որոնք սահմանված են Կողմի վարչատարածքային միավորների կամ տեղական մարմինների կողմից,

ii. պետական կառավարման մարմիններին կամ հանրային իրավունքի համաձայն ստեղծված սոցիալական ապահովության մարմիններին վճարվող պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ, և

iii. Կողմի սահմանած այլ կատեգորիաներում ներառված հարկեր՝ բացառությամբ մաքսատուրքերի, մասնավորապես՝

Ա. գույքի, ժառանգությամբ կամ նվիրատվությամբ ստացած գույքի նկատմամբ կիրառվող հարկեր,

Բ. անշարժ գույքի նկատմամբ կիրառվող հարկեր,

Գ. ընդհանուր սպառողական հարկեր, ինչպիսին են ավելացված արժեքի հարկը կամ շրջանառության հարկը,

Դ. ապրանքների և ծառայությունների նկատմամբ կիրառվող հատուկ հարկեր, ինչպես, օրինակ, ակցիզային հարկը,

Ե. ավտոմեքենաների օգտագործման կամ սեփականության նկատմամբ կիրառվող հարկեր,

Զ. ավտոմեքենաներից բացի այլ շարժական գույքի օգտագործման կամ սեփականության նկատմամբ կիրառվող հարկեր,

Է. ցանկացած այլ հարկ,

iv. վերը նշված iii ենթակետում վկայակոչված կատեգորիաներում ներառված հարկերը, որոնք սահմանվում են Կողմի վարչատարածքային միավորների կամ տեղական մարմինների կողմից:

2. Գոյություն ունեցող հարկեր, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան, թվարկված են Ա հավելվածում՝ 1-ին կետում նշված կատեգորիաներում:

3. Կողմերը ծանուցում են Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին կամ ՏՀԶԿ

գլխավոր քարտուղարին (այսուհետ՝ ավանդապահներ) 2-րդ կետում նշված ցանկի փոփոխման արդյունքում Ա հավելվածում կատարված ցանկացած փոփոխության մասին: Այդ փոփոխությունն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը ավանդապահի ստանալու օրվանից հետո եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

4. Կոնվենցիան կիրառվում է նաև ցանկացած նույնատիպ կամ էականորեն նման այնպիսի հարկերի նկատմամբ՝ դրանց սահմանման պահից, որոնք նախատեսվել են Պայմանավորվող պետությունում՝ տվյալ Կողմի համար Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո՝ ի լրումն Ա հավելվածում թվարկված արդեն իսկ գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն, և այդ դեպքում համապատասխան Կողմը ծանուցում է ավանդապահներից որևէ մեկին տվյալ հարկի սահմանման մասին:

ԳԼՈՒԽ II

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Հոդված 3

Սահմանումները

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով, եթե այլ բան նախատեսված չէ՝

ա. «դիմող պետություն» և «հայցվող պետություն» եզրույթները նշանակում են, համապատասխանաբար, ցանկացած Կողմ, որը դիմել է հարկային հարցերով վարչական աջակցություն ստանալու համար, և ցանկացած Կողմ, որին ներկայացվել է նման աջակցություն տրամադրելու հարցում,

բ. «հարկ» եզրույթը նշանակում է՝ ցանկացած հարկ կամ սոցիալական ապահովագրության վճար, որի նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան՝ 2-րդ հոդվածի համաձայն,

գ. «հարկային պահանջ» եզրույթը նշանակում է՝ հարկի ցանկացած գումար, ինչպես նաև դրա նկատմամբ հաշվեգրված տոկոսագումար, համապատասխան վարչական տույժեր և գումարի բռնագանձման հետ կապված ծախսեր, որոնք ենթակա են վճարման և դեռ չեն վճարվել,

դ. «իրավասու մարմին» եզրույթը նշանակում է՝ Բ հավելվածում թվարկված անձինք և մարմիններ,

ե. «քաղաքացիներ» եզրույթը Կողմի համար նշանակում է՝

i. տվյալ Կողմի քաղաքացիություն ունեցող բոլոր անհատները և

ii. բոլոր իրավաբանական անձինք, գործընկերությունները, ասոցիացիաները և այլ

մարմինները, որոնց տվյալ կարգավիճակը բխում է տվյալ Կողմում գործող օրենքներից:

Յուրաքանչյուր Կողմի համար, որն այդ նպատակով հանդես է եկել հայտարարությամբ, վերոնշյալ եզրույթներն ունեն Գ հավելվածում սահմանված նշանակությունը:

2. Ինչ վերաբերում է Կողմի կողմից Կոնվենցիայի կիրառմանը, դրանով չսահմանված ցանկացած եզրույթ, եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, ունի տվյալ Կողմի օրենսդրությամբ՝ Կոնվենցիայում ընդգրկված հարկերի վերաբերյալ սահմանված իմաստը:

3. Կողմերը Բ և Գ հավելվածներում արված ցանկացած փոփոխության մասին ծանուցում են ավանդապահներից որևէ մեկին: Այդ փոփոխությունն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը տվյալ ավանդապահի ստանալու օրվանից հետո եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

ԳԼՈՒԽ III

ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Բաժին I

Տեղեկությունների փոխանակումը

Հոդված 4

Ընդհանուր դրույթ¹

1. Կողմերը փոխանակում են ցանկացած տեղեկություն մասնավորապես սույն բաժնով նախատեսված կարգով, որը, ենթադրաբար, վերաբերում է սույն Կոնվենցիայով նախատեսված հարկերի վերաբերյալ վարչարարությանը կամ ներպետական օրենքների կիրառմանը:

2. Հանվել է:

3. Ցանկացած Կողմ ավանդապահներից որևէ մեկին ուղղված հայտարարությամբ կարող է նշել, որ, իր ներպետական օրենսդրության համաձայն, իր մարմինները կարող են տեղեկացնել իր ռեզիդենտին կամ քաղաքացուն նախքան նրա վերաբերյալ տեղեկությունների փոխանցումը՝ 5-րդ և 7-րդ հոդվածներին համապատասխան:

Հոդված 5

Տեղեկությունների փոխանակումը հարցման հիման վրա

1. Դիմող պետության հարցման հիման վրա հայցվող պետությունը դիմող պետությանը տրամադրում է 4-րդ հոդվածում նշված ցանկացած տեղեկություն, որը վերաբերում է կոնկրետ

¹ Հոդվածը փոփոխվել է Կոնվենցիան փոփոխող արձանագրության (CETS No. 208) դրույթների համաձայն

անձանց կամ գործարքների:

2. Եթե հայցվող պետության հարկային գործերի նյութերում առկա տեղեկությունները բավարար չեն տեղեկություններ տրամադրելու հարցումը բավարարելու համար, ապա տվյալ պետությունը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ պահանջվող տեղեկությունները դիմող պետությանը տրամադրելու համար:

Հոդված 6

Տեղեկությունների ավտոմատ փոխանակումը

Կախված գործերի կատեգորիաներից և փոխհամաձայնությամբ սահմանված ընթացակարգերի համաձայն՝ երկու կամ մի քանի Կողմ ավտոմատ ձևով փոխանակում են 4-րդ հոդվածում նշված տեղեկությունները:

Հոդված 7

Տեղեկությունների ինքնաբերական փոխանակումը

1. Կողմը, առանց նախնական հարցման, մյուս Կողմին փոխանցում է իրեն հայտնի տեղեկությունները՝ հետևյալ հանգամանքներում.

ա. առաջին նշված Կողմը հիմքեր ունի ենթադրելու, որ մյուս Կողմում կարող է լինել հարկի գումարների կորուստ,

բ. հարկային պարտավորություն կրող անձը ստանում է հարկի նվազեցում կամ ազատվում է հարկից առաջին նշված Կողմում, ինչը կհանգեցնի հարկի գումարի ավելացման կամ հարկային պարտավորության առաջացման մյուս Կողմում,

գ. մի Կողմում հարկային պարտավորություն կրող անձի և մեկ այլ Կողմում հարկային պարտավորություն կրող անձի միջև գործարքները կատարվում են մեկ կամ ավել երկրների միջոցով՝ այնպիսի եղանակով, որի արդյունքում մեկ կամ մյուս Կողմում կամ երկուսում էլ առաջանում է հարկի գումարների գծով խնայողություն,

դ. Կողմը հիմքեր ունի ենթադրելու, որ հարկի գումարների գծով խնայողությունը կարող է առաջանալ ձեռնարկությունների խմբերի միջև շահույթի արհեստական փոխանցումներից,

ե. Կողմերից մեկի կողմից մյուս Կողմին փոխանցված տեղեկությունները թույլ են տվել առաջին Կողմին հավաքագրել այնպիսի տեղեկություններ, որոնք կարող են օգտակար լինել մյուս Կողմում հարկային պարտավորությունների նախատեսման հարցում:

2. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է այնպիսի միջոցներ և իրականացնում է այնպիսի ընթացակարգեր, որոնք անհրաժեշտ են 1-ին կետում նշված տեղեկությունները մյուս Կողմին հասանելի դարձնելու համար:

Հոդված 8

Միաժամանակյա հարկային ստուգումները

1. Կողմերից որևէ մեկի պահանջով երկու կամ ավել Կողմեր միասին խորհրդակցում են՝ միաժամանակյա հարկային ստուգման ենթակա գործերը և դրանց ընթացակարգը սահմանելու նպատակով: Յուրաքանչյուր ներգրավված Կողմ որոշում է, թե արդյո՞ք ցանկանում է մասնակցել միաժամանակյա կոնկրետ հարկային ստուգման:

2. Սույն Կոնվենցիայի նպատակներով միաժամանակյա հարկային ստուգում նշանակում է՝ երկու կամ ավել Կողմերի միջև պայմանավորվածություն՝ յուրաքանչյուրն իր սեփական տարածքում իրականացնելու միաժամանակյա ստուգում այն անձի կամ անձանց հարկային գործերի նկատմամբ, որոնց հետ կապված՝ իրենք ունեն ընդհանուր կամ համանման շահ՝ նրանց կողմից ձեռք բերվող ցանկացած համապատասխան տեղեկություն փոխանակելու նպատակով:

Հոդված 9

Հարկային ստուգումներն արտերկրում

1. Դիմող պետության իրավասու մարմնի հարցումով հայցվող պետության իրավասու մարմինը կարող է դիմող պետության իրավասու մարմնի ներկայացուցիչներին թույլ տալ ներկա գտնվել հայցվող պետությունում իրականացվող հարկային ստուգման համապատասխան մասին:

2. Հարցումը բավարարվելու դեպքում հայցվող պետության իրավասու մարմինը հնարավորինս շուտ տեղեկացնում է դիմող պետության իրավասու մարմնին ստուգման ժամանակի և վայրի, ստուգում իրականացնելու համար նշանակված մարմնի կամ պաշտոնատար անձի, ինչպես նաև հայցվող պետության կողմից պահանջված՝ ստուգում իրականացնելու ընթացակարգերի և պայմանների մասին: Հարկային ստուգումների իրականացման վերաբերյալ բոլոր որոշումները կայացվում են հայցվող պետության կողմից:

3. Կողմը կարող է ավանդապահներից որևէ մեկին տեղեկացնել 1-ին կետում նշված նման հարցումները, ընդհանուր առմամբ, չընդունելու իր մտադրության մասին: Այդպիսի հայտարարություն կարելի է անել կամ այն հետ վերցնել ցանկացած ժամանակ:

Հոդված 10

Հակասող տեղեկությունները

Եթե Կողմը մյուս Կողմից ստանում է անձի հարկային գործերի վերաբերյալ տեղեկություններ, որոնք, պարզվում է, հակասում են իր տնօրինության տակ գտնվող տեղեկություններին, նա այդ մասին տեղեկացնում է տեղեկությունները տրամադրած Կողմին:

Բաժին II

Բռնագանձման հարցում աջակցությունը

Հոդված 11

Հարկային պահանջների բավարարումը

1. Դիմող պետության պահանջով հայցվող պետությունը, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին համապատասխան, առաջին նշված պետության հարկային պահանջները բավարարելու ուղղությամբ ձեռնարկում է անհրաժեշտ քայլեր այնպես, ինչպես կվարվեր իր հարկային պահանջների դեպքում:

2. 1-ին կետի դրույթը կիրառվում է միայն այն հարկային պահանջների նկատմամբ, որոնք համարվում են այնպիսի փաստաթղթի առարկա, որը թույլ է տալիս դրանց կատարման ապահովումը դիմող պետությունում, և եթե համապատասխան Կողմերի միջև առկա չէ այլ այնպիսի համաձայնություն, որը չի վիճարկվում: Այնուամենայնիվ, եթե պահանջը վերաբերում է դիմող պետության ոչ ռեզիդենտ անձի, ապա 1-ին կետը կիրառվում է միայն այն դեպքում, երբ պահանջն այլևս ենթակա չէ վիճարկման, եթե համապատասխան Կողմերի միջև առկա չէ այլ համաձայնություն:

3. Մահացած անձի կամ նրա գույքի նկատմամբ հարկային պահանջը բավարարելու հարցում աջակցություն տրամադրելու պարտավորությունը սահմանափակվում է տվյալ գույքի կամ գույքի յուրաքանչյուր շահառուի կողմից ձեռք բերված սեփականության արժեքով՝ կախված այն հանգամանքից՝ պահանջը պետք է բավարարվի գույքի՞ց, թե՞ դրա շահառուներից:

Հոդված 12

Ապահովման միջոցները

Դիմող պետության հարցումով հայցվող պետությունը հարկի գումարը բռնագանձելու նպատակով ձեռնարկում է ապահովման միջոցներ, եթե նույնիսկ պահանջը վիճարկվում է կամ դեռ չի համարվում հարկադիր կատարումը թույլատրող փաստաթղթի առարկա:

Հոդված 13

Հարցումն ուղեկցող փաստաթղթերը

1. Սույն բաժնի շրջանակներում վարչական աջակցություն տրամադրելու մասին հարցումը պետք է ուղեկցվի հետևյալ փաստաթղթերով.

ա. հայտարարություն այն մասին, որ հարկային պահանջը վերաբերում է սույն Կոնվենցիայով նախատեսված հարկին, իսկ դրա բավարարման դեպքում՝ [հայտարարություն]

այն մասին, որ հարկային պահանջը, 11-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, չի վիճարկվում կամ ենթակա չէ վիճարկման,

բ. դիմող պետությունում հարկադիր կատարումը թույլատրող փաստաթղթի պաշտոնական պատճենը, և

գ. բռնագանձման կամ ապահովման միջոցի համար անհրաժեշտ ցանկացած այլ փաստաթուղթ:

2. Դիմող պետությունում հարկադիր կատարումը թույլատրող փաստաթուղթը, նպատակահարմար լինելու դեպքում և հայցվող պետությունում գործող դրույթների համաձայն, ընդունվում է, ճանաչվում է, լրացվում կամ փոխարինվում է վերջին պետությունում հարկադիր կատարումը թույլատրող փաստաթղթով աջակցություն տրամադրելու վերաբերյալ հարցումը ստանալու օրվանից հետո՝ հնարավորինս շուտ:

Հոդված 14

Ժամկետները

1. Այն հարցերը, որոնք վերաբերում են ցանկացած ժամկետի, որը լրանալուց հետո հարկային պահանջը չի կարող բավարարվել, կարգավորվում են դիմող պետության օրենքով: Աջակցություն տրամադրելու վերաբերյալ հարցման մեջ պետք է նշվեն տվյալ ժամկետին վերաբերող մանրամասները:

2. Աջակցություն տրամադրելու վերաբերյալ հարցումը բավարարելու նպատակով հայցվող պետության կողմից բռնագանձման համար իրականացված այն գործողությունները, որոնք, տվյալ պետության օրենքների համաձայն, կունենան 1-ին կետում նշված ժամկետը կասեցնելու կամ ընդհատելու ազդեցություն, պետք է նման ազդեցություն ունենան նաև դիմող պետության օրենքների համաձայն: Հայցվող պետությունն այդպիսի գործողությունների մասին տեղեկացնում է դիմող պետությանը:

3. Ցանկացած դեպքում հայցվող պետությունը պարտավոր չէ բավարարել աջակցություն տրամադրելու վերաբերյալ այն հարցումը, որը ներկայացվել է հարկադիր կատարումը թույլատրող բնօրինակ փաստաթղթի ամսաթվից 15 տարի հետո:

Հոդված 15

Առաջնահերթությունը

Հարկային պահանջը, որի բավարարման համար աջակցություն է տրամադրվել, հայցվող պետությունում չունի տվյալ պետության հարկային պահանջներին հատուկ շնորհված որևէ առաջնահերթություն, եթե նույնիսկ բավարարման կիրառվող ընթացակարգն իր հարկային պահանջների նկատմամբ կիրառվող նույն ընթացակարգն է:

Հոդված 16

Վճարման հետաձգումը

Հայցվող պետությունը կարող է թույլ տալ վճարման հետաձգում կամ տարաժամկետ վճարում, եթե նրա օրենքները կամ վարչական գործելակերպը թույլ են տալիս դա անել համանման հանգամանքներում, սակայն առաջին հերթին պետք է այդ մասին տեղեկացնի դիմող պետությանը:

Բաժին III

Փաստաթղթերի հանձնումը

Հոդված 17

Փաստաթղթերի հանձնումը

1. Դիմող պետության հարցումով հայցվող պետությունը հասցեատիրոջն է հանձնում փաստաթղթերը՝ ներառյալ դատական որոշումներին վերաբերող այն փաստաթղթերը, որոնք ստացվել են դիմող պետությունից և վերաբերում են սույն Կոնվենցիայով նախատեսված հարկին:

2. Հայցվող պետությունը փաստաթղթերի հանձնումը կատարում է.

ա. էականորեն համանման բնույթի փաստաթղթերի հանձնման համար իր ներպետական օրենքներով նախատեսված մեթոդով,

բ. հնարավորության սահմաններում՝ դիմող պետության կողմից հայցվող որոշակի մեթոդով կամ իր օրենքներով նախատեսված՝ տվյալ մեթոդին ամենամոտ մեթոդով:

3. Կողմը մյուս Կողմի տարածքում գտնվող անձին փաստաթղթերի հանձնումը կարող է կատարել անմիջապես փոստով ուղարկելու միջոցով:

4. Կոնվենցիայում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես Կողմի կողմից իր օրենքներին համապատասխան փաստաթղթերի ցանկացած հանձնում անվավեր դարձնող:

5. Այն դեպքում, երբ փաստաթուղթը հանձնվում է սույն հոդվածին համապատասխան, այն կարող է թարգմանությամբ չզուգակցվել: Այնուամենայնիվ, եթե հաստատվում է, որ հասցեատերը չի կարող հասկանալ փաստաթղթի լեզուն, ապա հայցվող պետությունը պետք է կազմակերպի դրա թարգմանությունը կամ կազմի դրա համառոտագիրը իր պաշտոնական լեզվով կամ լեզուներից մեկով: Որպես այլընտրանք՝ նա կարող է խնդրել դիմող պետությանը փաստաթուղթն ուղարկել թարգմանված կամ դրան կցել համառոտագիրը՝ հայցվող պետության, Եվրոպայի խորհրդի կամ ՏՀԶԿ պաշտոնական լեզուներից մեկով:

ԳԼՈՒԽ IV

ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 18

Դիմող պետության կողմից տրամադրվող տեղեկությունները

1. Աջակցություն տրամադրելու վերաբերյալ հարցման մեջ անհրաժեշտության դեպքում պետք է նշվեն.

ա. Մարմինը կամ ծառայությունը, որը նախաձեռնել է իրավասու մարմնի կողմից ներկայացված հարցումը,

բ. անունը, հասցեն կամ այլ մանրամասներ, որոնք կօգնեն պարզել այն անձի ինքնությունը, որի առնչությամբ ներկայացվել է հարցումը¹,

գ. տեղեկություններ ստանալու վերաբերյալ հարցման դեպքում՝ այն ձևը, որով դիմող պետությունը ցանկանում է ստանալ տեղեկությունները՝ իր կարիքները բավարարելու համար,

դ. բռնագանձման կամ ապահովման միջոցներ կիրառելու հարցում աջակցություն տրամադրելու վերաբերյալ հարցման դեպքում՝ հարկային պահանջի բնույթը, հարկային պահանջի բաղադրիչները և այն գույքը, որից հարկային պահանջը կարող է բավարարվել,

ե. փաստաթղթերի հանձնման վերաբերյալ հարցման դեպքում՝ հանձնվող փաստաթղթի բնույթը և առարկան,

զ. արդյո՞ք այն համապատասխանում է դիմող պետության օրենքներին և վարչական գործելակերպին, և արդյո՞ք դա արդարացված է 21.2.է հոդվածի պահանջների լույսի ներքո:

2. Աջակցություն տրամադրելու վերաբերյալ հարցմանն առնչվող ցանկացած այլ տեղեկություն հայտնի դառնալու դեպքում դիմող պետությունը դա անմիջապես փոխանցում է հայցվող պետությանը:

Հոդված 19

Հանվել է:²

¹ Տեքստը փոփոխվել է Կոնվենցիան փոփոխող արձանագրության (CETS No. 208) դրույթների համաձայն

² Հոդվածը հանվել է Կոնվենցիան փոփոխող արձանագրության (CETS No. 208) դրույթների համաձայն

Հոդված 20

Աջակցություն տրամադրելու վերաբերյալ հարցման պատասխանը

1. Եթե աջակցություն տրամադրելու վերաբերյալ հարցումը բավարարվում է, ապա հայցվող պետությունը հնարավորինս շուտ տեղեկացնում է դիմող պետությանը ձեռնարկված գործողության և ցուցաբերված աջակցության արդյունքի մասին:

2. Եթե հարցումը մերժվում է, հայցվող պետությունը հնարավորինս շուտ տեղեկացնում է դիմող պետությանը այդ որոշման և դրա պատճառների մասին:

3. Եթե տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ հարցման կապակցությամբ դիմող պետությունը նշել է այն ձևը, որով ցանկանում է ստանալ տեղեկությունները, իսկ հայցվող պետությունը կարող է դա անել, ապա հայցվող պետությունը տեղեկությունները տրամադրում է պահանջվող ձևով:

Հոդված 21

Անձանց պաշտպանությունը և աջակցություն տրամադրելու պարտավորության սահմանները³

1. Սույն Կոնվենցիայում ոչինչ չի ազդում հայցվող պետության օրենքներով կամ վարչական գործելակերպով անձանց վերապահված իրավունքների և երաշխիքների վրա:

2. Բացառությամբ 14-րդ հոդվածի՝ սույն Կոնվենցիայի դրույթները չպետք է մեկնաբանվեն այնպես, որ հայցվող պետության նկատմամբ սահմանվեն հետևյալ պարտավորությունները.

ա. իրականացնել միջոցառումներ, որոնք չեն համապատասխանում իր իսկ օրենքներին կամ վարչական գործելակերպին կամ դիմող պետության օրենքներին կամ վարչական գործելակերպին,

բ. իրականացնել միջոցառումներ, որոնք կհակասեն հանրային կարգին (*ordre public*),

գ. տրամադրել տեղեկություն, որը հնարավոր չէ ձեռք բերել իր իսկ օրենքների կամ վարչական գործելակերպի համաձայն կամ դիմող պետության օրենքների կամ վարչական գործելակերպի համաձայն,

դ. տրամադրել տեղեկություն, որով կբացահայտվի որևէ առևտրային, գործարար, արդյունաբերական, կոմերցիոն կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրային գործընթաց, կամ՝ տեղեկություն, որի բացահայտումը կհակասի հանրային կարգին (*ordre public*),

³ Հոդվածը փոփոխվել է Կոնվենցիան փոփոխող արձանագրության (CETS No. 208) դրույթների համաձայն

ե. տրամադրել վարչական աջակցություն այն դեպքում և այնքանով, որքանով համարվում է, որ դիմող պետությունում հարկումը հակասում է հարկման համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներին կամ կրկնակի հարկումից խուսափելու համար կնքված կոնվենցիայի կամ հայցվող պետության կողմից դիմող պետության հետ կնքված ցանկացած այլ կոնվենցիայի դրույթներին,

զ. տրամադրել վարչական աջակցություն՝ դիմող պետության հարկային օրենսդրության այնպիսի դրույթ կամ դրա հետ կապված ցանկացած այնպիսի պահանջ կիրառելու կամ կատարելու նպատակով, որով խտրական վերաբերմունք է դրսևորվում հայցվող պետության քաղաքացու նկատմամբ՝ միևնույն հանգամանքներում դիմող պետության քաղաքացու համեմատությամբ,

է. տրամադրել վարչական աջակցություն այն դեպքում, երբ դիմող պետությունը չի իրականացրել իր օրենքների կամ վարչական գործելակերպի շրջանակներում հասանելի բոլոր ողջամիտ միջոցառումները՝ բացառությամբ այն դեպքի, երբ այդ միջոցառումների իրականացումը կարող է առաջացնել անհամաչափ դժվարություններ,

ը. տրամադրել աջակցություն բռնագանձման հարցում այն դեպքերում, երբ այդ պետության վարչական բեռը հստակորեն անհամաչափ է դիմող պետությունից սպասվելիք օգուտի նկատմամբ:

3. Եթե դիմող պետությունը սույն Կոնվենցիայի համաձայն տեղեկություն տրամադրելու վերաբերյալ հարցում է ներկայացրել, ապա հայցվող պետությունն օգտագործում է տեղեկություններ հավաքելու իր միջոցները պահանջվող տեղեկությունը ձեռք բերելու համար, եթե նույնիսկ հայցվող պետությանն իր սեփական հարկային նպատակների համար կարող է անհրաժեշտ չլինել այդ տեղեկությունը: Նախորդ նախադասության մեջ ընդգրկված պարտավորության վրա տարածվում են սույն Կոնվենցիայում առկա սահմանափակումները, սակայն այդ սահմանափակումները, մասնավորապես՝ 1-ին և 2-րդ կետերով նախատեսվածները, ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես այնպիսի սահմանափակումներ, որոնցով հայցվող պետությանը թույլատրվում է մերժել տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ այդ տեղեկությունը ազգային մակարդակով հետաքրքրություն չի ներկայացնում իր համար:

4. Սույն Կոնվենցիայի, ներառյալ, մասնավորապես՝ 1-ին և 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես այնպիսի սահմանափակումներ, որոնցով հայցվող պետությանը թույլատրվում է մերժել տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ այդ տեղեկությունները տնօրինում է բանկը, ֆինանսական այլ հաստատություն, գործակալության կամ վստահված անձի կարգավիճակով հանդես եկող լիազորված սուբյեկտը կամ անձը, կամ այն պատճառով, որ դա վերաբերում է անձի կողմից սեփականության իրավունքի մասով հետապնդվող շահերին:

Հոդված 22

Գաղտնիությունը

1. Սույն Կոնվենցիայի շրջանակներում Կողմի ձեռք բերած ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի և պաշտպանվում է այդ Կողմի ներպետական օրենքների համաձայն տեղեկություն ստանալու համար նախատեսված միևնույն կարգով և այնքանով, որքանով անհրաժեշտ է անձնական տվյալների պաշտպանության անհրաժեշտ մակարդակն ապահովելու համար՝ այն երաշխիքներին համապատասխան, որոնք կարող է սահմանել դրանք տրամադրող Կողմը իր ներպետական օրենքների ներքո պահանջվող կարգով:¹

3. Ցանկացած դեպքում այդ տեղեկությունների մասին հայտնում են միայն այն անձանց կամ մարմիններին (այդ թվում՝ դատարաններին և վարչական կամ վերահսկող մարմիններին), որոնք առնչվում են այդ Կողմի հարկերի գնահատմանը, հավաքմանը կամ բռնագանձմանը, դրանց հետ կապված հարկադիր կատարմանը կամ հետապնդմանը կամ դրանց առնչությամբ բողոքների որոշում կայացնելուն կամ էլ վերը նշվածի նկատմամբ վերահսկողություն իրականացնելուն: Միայն վերը նշված անձինք կամ մարմինները կարող են օգտագործել տեղեկությունները և միայն այդ նպատակներով: Չնայած 1-ին կետի դրույթներին՝ նրանք կարող են հրապարակել դրանք դոնբաց դատական նիստերում կամ այդ հարկերին առնչվող դատական որոշումներում:

3. Եթե Կողմը կատարել է 30-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով սահմանված վերապահումը, ապա այդ Կողմից տեղեկություններ ստացող ցանկացած այլ Կողմ չի կարող դրանք օգտագործել այդ կատեգորիայում սահմանված այն հարկի նպատակով, որի կապակցությամբ արվել է վերապահումը: Նույն կերպ, այդպիսի վերապահում կատարող Կողմը չի կարող օգտագործել Կոնվենցիայի շրջանակներում ձեռք բերված տեղեկությունն այն կատեգորիայում սահմանված հարկի նպատակով, որի կապակցությամբ արվել է վերապահումը:

4. Չնայած 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթներին՝ Կողմի ձեռք բերած տեղեկությունները կարող են օգտագործվել այլ նպատակներով այն դեպքում, երբ, տեղեկությունները տրամադրող Կողմի օրենքների համաձայն, այդ տեղեկությունները կարող են օգտագործվել նման այլ նպատակներով, և այդ Կողմի իրավասու մարմինը թույլ է տալիս դրանց օգտագործումը: Մի Կողմի կողմից մյուս Կողմին տրամադրված տեղեկությունները վերջինիս կողմից կարող են փոխանցվել երրորդ Կողմի՝ նախապես ստանալով առաջին նշված Կողմի իրավասու մարմնի թույլտվությունը:

¹ Տեքստը փոփոխվել է Կոնվենցիան փոփոխող արձանագրության (CETS No. 208) դրույթների համաձայն

Հոդված 23

Վարույթները

1. Հայցվող պետության կողմից սույն Կոնվենցիայի շրջանակներում ձեռնարկված միջոցների կապակցությամբ վարույթները պետք է հարուցվեն միայն տվյալ պետության համապատասխան մարմնում:

2. Դիմող պետության կողմից սույն Կոնվենցիայի շրջանակներում ձեռնարկված միջոցների, մասնավորապես՝ հարկի գումարների բռնագանձման ոլորտում ձեռնարկված, հարկային պահանջի առկայությանը կամ գումարին կամ դրանց հարկադիր կատարումը թույլատրող փաստաթղթին վերաբերող միջոցների կապակցությամբ վարույթները պետք է հարուցվեն միայն տվյալ պետության համապատասխան մարմնում: Եթե հարուցվում են նման վարույթներ, ապա դիմող պետությունը տեղեկացնում է հայցվող պետությանը, որը կասեցնում է ընթացակարգը՝ սպասելով տվյալ մարմնի որոշմանը:

Այնուամենայնիվ, հայցվող պետությունը դիմող պետության խնդրանքով ձեռնարկում է ապահովման միջոցներ՝ բռնագանձումն ապահովելու նպատակով: Նման վարույթների մասին հայցվող պետությանը կարող է տեղեկացնել ցանկացած շահագրգիռ անձ: Նման տեղեկություններ ստանալու պարագայում հայցվող պետությունը անհրաժեշտության դեպքում տվյալ հարցի շուրջ խորհրդակցում է դիմող պետության հետ:

3. Վարույթով վերջնական որոշում կայացվելուց անմիջապես հետո հայցվող պետությունը կամ դիմող պետությունը, կախված իրավիճակից, տեղեկացնում է մյուս պետությանը ընդունված որոշման և դրա այն հետևանքների մասին, որոնք առնչվում են աջակցություն տրամադրելու վերաբերյալ հարցմանը:

ԳԼՈՒԽ V

ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 24

Կոնվենցիայի կիրարկումը

1. Կողմերը սույն Կոնվենցիայի կիրարկման նպատակով հաղորդակցվում են միմյանց հետ իրենց համապատասխան իրավասու մարմինների միջոցով: Իրավասու մարմինները կարող են այս նպատակով հաղորդակցվել ուղղակիորեն և կարող են լիազորել ստորադաս մարմիններին՝ գործելու իրենց անունից: Երկու կամ ավել Կողմերի իրավասու մարմինները կարող են փոխհամաձայնության գալ միմյանց նկատմամբ Կոնվենցիայի կիրառման ձևի վերաբերյալ:

2. Եթե հայցվող պետությունը համարի, որ սույն Կոնվենցիայի իրականացումը որոշակի դեպքում կունենա լուրջ և անցանկալի հետևանքներ, ապա հայցվող և դիմող պետությունների

իրավասու մարմինները կխորհրդակցեն միմյանց հետ և կփորձեն հարթել իրավիճակը փոխհամաձայնությամբ:

3. Կողմերի իրավասու մարմինների ներկայացուցիչներից բաղկացած համակարգող մարմինը վերահսկում է սույն Կոնվենցիայի կիրարկումը և դրան առնչվող զարգացումները ՏՀԶԿ հովանու ներքո: Այս նպատակով համակարգող մարմինն առաջարկում է ցանկացած գործողության կատարում, որը կնպաստի Կոնվենցիայի ընդհանուր նպատակներին հասնելուն: Մասնավորապես, նա պետք է գործի որպես նոր մեթոդների և ընթացակարգերի ուսումնասիրության ֆորում՝ հարկային հարցերով միջազգային համագործակցությունն ուժեղացնելու նպատակով, և անհրաժեշտության դեպքում կարող է առաջարկել վերանայել Կոնվենցիան կամ կատարել փոփոխություններ: Կոնվենցիան ստորագրած, սակայն դեռ չվավերացրած, չընդունած կամ չհաստատած պետություններն իրավունք ունեն համակարգող մարմնի հանդիպումներում ունենալու ներկայացուցիչներ՝ դիտորդի կարգավիճակով:

4. Կողմը կարող է համակարգող մարմնին խնդրել ներկայացնել Կոնվենցիայի դրույթների մեկնաբանության վերաբերյալ կարծիքներ:

5. Այն դեպքում, երբ Կոնվենցիայի կիրարկման կամ մեկնաբանության հետ կապված երկու կամ ավելի Կողմերի միջև առաջանում են դժվարություններ կամ կասկածներ տվյալ Կողմերի իրավասու մարմինները փորձում են լուծել խնդիրը փոխհամաձայնությամբ: Համաձայնության մասին տեղեկացվում է համակարգող մարմինը:

6. ՏՀԶԿ գլխավոր քարտուղարը տեղեկացնում է Կողմերին և ստորագրող այն պետություններին, որոնք դեռ չեն վավերացրել, ընդունել կամ հաստատել Կոնվենցիան, համակարգող մարմնի կողմից՝ վերոնշյալ 4-րդ կետի դրույթների համաձայն ներկայացված կարծիքների մասին և վերոնշյալ 5-րդ կետի համաձայն ձեռք բերված փոխհամաձայնությունների մասին:

Հոդված 25

Լեզուն

Աջակցություն տրամադրելու վերաբերյալ հարցումները և դրանց պատասխանները կազմվում են ՏՀԶԿ և Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով կամ տվյալ Պայմանավորվող պետությունների միջև երկկողմ համաձայնեցված ցանկացած այլ լեզվով:

Հոդված 26

Ծախսերը

Եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի փոխհամաձայնությամբ, ապա՝

ա. աջակցության տրամադրման հետ կապված բոլոր սովորական ծախսերը կրում է հայցվող պետությունը,

բ. աջակցության տրամադրման հետ կապված բոլոր չնախատեսված ծախսերը կրում է դիմող պետությունը:

ԳԼՈՒԽ VI

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 27

Այլ միջազգային համաձայնագրեր կամ կարգավորումներ

1. Սույն Կոնվենցիայով տրամադրվող աջակցության հնարավորությունները չեն սահմանափակում, ոչ էլ սահմանափակված են Կողմերի միջև կնքված կամ ապագայում կնքվելիք միջազգային համաձայնագրերով կամ այլ կարգավորումներով կամ հարկային հարցերով համագործակցությանը վերաբերող այլ փաստաթղթերով նախատեսված աջակցության հնարավորություններով:

2. Չնայած 1-ին կետին՝ Եվրոպական միության անդամ պետություններ հանդիսացող Կողմերն իրենց փոխհարաբերություններում կարող են կիրառել Կոնվենցիայով նախատեսված աջակցություն ցուցաբերելու հնարավորություններն այնքանով, որքանով դրանցով թույլատրվում է ավելի լայն համագործակցություն, քան Եվրոպական միության կիրառելի կանոններով առաջարկվող հնարավորություններով:¹

Հոդված 28

Կոնվենցիայի ստորագրումը և ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների և ՏՀԶԿ անդամ երկրների կողմից ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում ավանդապահներից մեկին:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն օրվանից հետո եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը, երբ հինգ երկիր տվել է կոնվենցիան իր համար պարտադիր լինելու համաձայնություն՝ 1-ին կետի դրույթներին համապատասխան:

3. Եվրոպայի խորհրդի ցանկացած անդամ պետության կամ ՏՀԶԿ ցանկացած անդամ պետության համար, որը դրանից հետո է տալիս Կոնվենցիան իր համար պարտադիր լինելու համաձայնություն, այն ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից հետո եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող

¹ Տեքստը փոփոխվել է Կոնվենցիան փոփոխող արձանագրության (CETS No. 208) դրույթների համաձայն

ամսվա առաջին օրը:

4. Եվրոպայի խորհրդի ցանկացած անդամ պետություն կամ ՏՀՀ ցանկացած անդամ երկիր, որը Կոնվենցիայի Կողմ է դառնում սույն Կոնվենցիան փոփոխող Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո, որը բացվել է ստորագրման համար 2010 թվականի մայիսի 27-ին («2010 թվականի Արձանագրություն»), կհամարվի Արձանագրությամբ փոփոխված Կոնվենցիայի Կողմ, եթե չի հայտնում այլ մտադրության մասին ավանդապահներից որևէ մեկին ուղղված գրավոր ծանուցմամբ:²

5. 2010 թվականի Արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհրդի կամ ՏՀՀ անդամ չհանդիսացող ցանկացած պետություն կարող է դիմել՝ 2010 թվականի Արձանագրությամբ փոփոխված սույն Կոնվենցիան ստորագրելու և վավերացնելու հրավեր ստանալու համար: Ցանկացած այդպիսի դիմում պետք է հասցեագրել ավանդապահներից որևէ մեկին, որն այն փոխանցում է Կողմերին: Ավանդապահը տեղեկացնում է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեին և ՏՀՀ խորհրդին: Սույն Կոնվենցիայի Կողմ դառնալու համար դիմած պետություններին հրավեր ներկայացնելու վերաբերյալ որոշումը կայացվում է Կոնվենցիայի Կողմերի փոխհամաձայնությամբ՝ համակարգող մարմնի միջոցով: Սույն կետի համաձայն՝ 2010 թվականի Արձանագրությամբ փոփոխված Կոնվենցիան վավերացնող ցանկացած պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման մասին փաստաթուղթն ավանդապահներից որևէ մեկին ի պահ հանձնելու օրվանից հետո եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

6. 2010 թվականի Արձանագրությամբ փոփոխված սույն Կոնվենցիայի դրույթները գործում են հարկվող այն ժամանակահատվածների առնչությամբ վարչական աջակցություն ցուցաբերելու համար, որոնք սկսվում են 2010 թվականի Արձանագրությամբ փոփոխված Կոնվենցիան Կողմի համար ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո, կամ հարկվող որևէ ժամանակահատվածի բացակայության դեպքում՝ 2010 թվականի Արձանագրությամբ փոփոխված Կոնվենցիան Կողմի համար ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո առաջացած հարկերի գանձման առնչությամբ վարչական աջակցություն ցուցաբերելու համար: Ցանկացած երկու կամ ավել Կողմ կարող են փոխադարձ համաձայնության գալ, որ 2010 թվականի Արձանագրությամբ փոփոխված Կոնվենցիան գործի հարկվող ավելի վաղ ժամանակահատվածների կամ հարկերի գանձման առնչությամբ վարչական աջակցություն ցուցաբերելու նկատմամբ:¹

7. Չնայած 6-րդ կետին՝ այնպիսի դիտավորությամբ կատարված արարք ներառող հարկային հարցերի դեպքում, որի համար, դիմող Կողմի քրեական իրավունքի համաձայն, նախատեսվում է պատասխանատվություն, 2010 թվականի Արձանագրությամբ փոփոխված

² Տեքստը լրացվել է Կոնվենցիան փոփոխող արձանագրության (CETS No. 208) դրույթների համաձայն

¹ Տեքստը լրացվել է Կոնվենցիան փոփոխող արձանագրության (CETS No. 208) դրույթների համաձայն

սույն Կոնվենցիայի դրույթները Կողմի համար ուժի մեջ մտնելու օրվանից գործում են հարկման ավելի վաղ ժամանակահատվածների կամ հարկերի գանձման նկատմամբ:

Հոդված 29

Կոնվենցիայի տարածքային կիրառությունը

1. Յուրաքանչյուր պետություն ստորագրման ժամանակ կամ իր վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Կոնվենցիան:

2. Ցանկացած պետություն կարող է ավանդապահներից մեկին ավելի ուշ ուղղված հայտարարությամբ սույն Կոնվենցիայի կիրառումը տարածել այդ հայտարարության մեջ նշված ցանկացած այլ տարածքի վրա: Այդ տարածքի համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ հայտարարությունն ավանդապահի ստանալու օրվանից հետո եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Նախորդ երկու կետերի համաձայն արված ցանկացած հայտարարություն կարող է ավանդապահներից մեկին ուղղված ծանուցման միջոցով հետ վերցնել նման հայտարարության մեջ նշված ցանկացած տարածքի մասով: Հետ վերցնելն ուժի մեջ է մտնում նման ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից հետո եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 30

Վերապահումները

1. Յուրաքանչյուր պետություն կարող է ստորագրման ժամանակ կամ իր վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս հայտարարել, որ իրեն վերապահում է իրավունք՝

ա. չտրամադրելու աջակցության որևէ ձև մյուս Կողմերի՝ 2-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետում ներառված կատեգորիաներից որևէ մեկով նախատեսված հարկերի կապակցությամբ՝ պայմանով, որ այդ Կողմը Կոնվենցիայի Ա հավելվածում չի ներառի տվյալ կատեգորիայով նախատեսված որևէ տեղական հարկ,

բ. չտրամադրելու աջակցություն ցանկացած հարկային պահանջի բավարարման կամ վարչական տույժի բավարարման հարցում՝ բոլոր հարկերի կամ միայն 2-րդ հոդվածի 1-ին կետում ներառված կատեգորիաներից մեկով կամ մի քանիսով նախատեսված հարկերի մասով,

գ. չտրամադրելու աջակցություն որևէ հարկային պահանջի առնչությամբ, որը Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գոյություն է ունեցել տվյալ պետության կամ այն պետության համար, որտեղ նախկինում վերապահում է արվել վերը նշված «ա» կամ «բ»

ենթակետերի համաձայն՝ տվյալ կատեգորիայում ներառված հարկերի կապակցությամբ արված նման վերապահումը հանելու օրվա դրությամբ,

դ. չտրամադրելու աջակցություն փաստաթղթերի հանձնման կապակցությամբ՝ բոլոր հարկերի կամ միայն 2-րդ հոդվածի 1-ին կետում ներառված կատեգորիաներից մեկով կամ մի քանիսով նախատեսված հարկերի մասով,

ե. չթույլատրելու փաստաթղթերի հանձնումը փոստի միջոցով, ինչպես նախատեսված է 17-րդ հոդվածի 3-րդ կետում,

զ. 28-րդ հոդվածի 7-րդ կետը կիրառելու բացառապես այն հարկվող ժամանակահատվածների առնչությամբ վարչական աջակցություն ցուցաբերելու համար, որոնք սկսվում են 2010 թվականի Արձանագրությամբ փոփոխված Կոնվենցիան Կողմի համար ուժի մեջ մտնելու տարվան նախորդող երրորդ տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո, կամ հարկվող որևէ ժամանակահատվածի բացակայության դեպքում՝ 2010 թվականի Արձանագրությամբ փոփոխված Կոնվենցիան Կողմի համար ուժի մեջ մտնելու տարվան նախորդող երրորդ տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո առաջացած հարկերի գանձման առնչությամբ վարչական աջակցություն ցուցաբերելու համար:¹

2. Այլ վերապահումներ չեն կարող կատարվել:

3. Կողմի համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո տվյալ Կողմը կարող է կատարել 1-ին կետում նշված մեկ կամ մի քանի վերապահում, որոնք չի կատարել վավերացման, ընդունման կամ հաստատման ժամանակ: Նման վերապահումներն ուժի մեջ են մտնում այդ վերապահումները ավանդապահներից որևէ մեկի ստանալու օրվանից հետո եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

4. Ցանկացած Կողմ, որը վերապահում է կատարել 1-ին և 3-րդ կետերի համաձայն, կարող է ավանդապահներից մեկին ուղղված ծանուցման միջոցով ամբողջությամբ կամ մասնակիորեն այն հանել: Վերապահման հետ վերցնելն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը տվյալ ավանդապահի ստանալու օրը:

5. Սույն Կոնվենցիայի որևէ դրույթի մասով վերապահում կատարած Կողմը չի կարող պահանջել համապատասխան դրույթի կիրառումն այլ Կողմի կողմից. այնուամենայնիվ, եթե վերապահումը մասնակի է, ապա Կողմը կարող է պահանջել այդ դրույթի կիրառումն այնքանով, որքանով ինքն ընդունել է այդ դրույթը:

Հոդված 31

Չեղյալ հայտարարելը

1. Ցանկացած Կողմ ցանկացած ժամանակ կարող է չեղյալ հայտարարել սույն

¹ Տեքստը լրացվել է Կոնվենցիան փոփոխող արձանագրության (CETS No. 208) դրույթների համաձայն

Կոնվենցիան ավանդապահներից որևէ մեկին ուղղված ծանուցման միջոցով:

2. Ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից հետո եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Ցանկացած Կողմ, որը չեղյալ է հայտարարում Կոնվենցիան, պարտավորվում է պահպանել 22-րդ հոդվածի դրույթներն այնքան ժամանակ, քանի դեռ իր տիրապետման տակ է գտնվում սույն Կոնվենցիայի շրջանակներում ձեռք բերված որևէ փաստաթուղթ կամ տեղեկություն:

Հոդված 32

Ավանդապահները և նրանց գործառույթները

1. Ավանդապահը, որին ներկայացվել է ակտ, ծանուցում կամ հաղորդագրություն, ծանուցում է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ու ՏՀԶԿ անդամ երկրներին և սույն Կոնվենցիայի ցանկացած Կողմի հետևյալի մասին.¹

ա. ցանկացած ստորագրման,

բ. վավերացման, ընդունման կամ հաստատման մասին ցանկացած փաստաթուղթ ի պահ հանձնելու,

գ. 28-րդ և 29-րդ հոդվածների դրույթներին համապատասխան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու ցանկացած ամսաթվի,

դ. 4-րդ հոդվածի 3-րդ կետի կամ 9-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթների համաձայն արված ցանկացած հայտարարության կամ այդ հայտարարությունը հետ վերցնելու,

ե. 30-րդ հոդվածի դրույթների համաձայն արված ցանկացած վերապահման և 30-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթների համաձայն ուժի մեջ մտած վերապահումը հանելու,

զ. 2-րդ հոդվածի 3-րդ կամ 4-րդ կետերի, 3-րդ հոդվածի 3-րդ կետի, 29-րդ հոդվածի կամ 31-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների համաձայն ստացված ցանկացած ծանուցման,

է. սույն Կոնվենցիային առնչվող ցանկացած այլ ակտի, ծանուցման կամ հաղորդագրության:

2. Այն ավանդապահը, որը, 1-ին կետի դրույթներին համապատասխան, ստանում է հաղորդագրություն կամ ուղարկում է ծանուցում, այդ մասին անմիջապես տեղեկացնում է մյուս ավանդապահին:

Ի հաստատումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կարգով լիազորված լինելով,

¹ Տեքստը փոփոխվել է Կոնվենցիան փոփոխող արձանագրության (CETS No. 208) դրույթների համաձայն

ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Ստրասբուրգում 1988 թվականի հունվարի 25-ին, անգլերենով և ֆրանսերենով. երկու տեքստերն էլ հավասարազոր են՝ կազմված երկու օրինակից, որոնցից մեկն ի պահ է հանձնվում Եվրոպայի խորհրդի պահոցին, մյուսը՝ ՏՀԶԿ պահոցին: Եվրոպայի խորհրդի և ՏՀԶԿ գլխավոր քարտուղարները հաստատված պատճենները փոխանցում են Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության և ՏՀԶԿ անդամ երկրներին:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 1988թ. հունվարի 25-ին ստորագրված «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» Կոնվենցիայի (2010թ. արձանագրությամբ փոփոխված) հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**